**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**հրավերի պարզաբանման մասին**

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2025 թվականի դեկտեմբերի 03-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է
«Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը **«ԷԱՃԱՊՁԲ-2026/3-1-ԵՊԲՀ»**

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կարիքների համար **գրենական պիտույքների և գրասենյակային ապրանքների** ձեռքբերման նպատակով կազմակերպված **«ԷԱՃԱՊՁԲ-2026/3-1-ԵՊԲՀ»** ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 2025 թվականի դեկտեմբերի 01-ին ստացված հարցադրումը և դրա վերաբերյալ 2025 թվականի դեկտեմբերի 03-ին տրամադրված պարզաբանումը՝

**Հարցադրում**

Հարգելի պատվիրատու,

Խնդրում ենք պարզաբանել մրցույթի 1-ին չափաբաժնի՝ A4 ֆորմատի թղթի տեխնիկական պահանջները: Մասնավորապես, մրցույթի փաստաթղթերում նշված է, որ թղթի պայծառությունը պետք է լինի առնվազն 109%: Ցանկանում ենք նշել, որ A+ դասի թղթի պայծառությունը սկսվում է 100%-ից, և այդ տարբերությունը անզեն աչքով տեսանելի չէ, ինչպես նաև չի ազդում արտադրանքի տեսքի կամ օգտագործման որակի վրա: Բացի այդ, նշված ցուցանիշը դիտվում է որպես օժանդակ պարամետր, և մի շարք արտադրողների մոտ այն պարտադիր կերպով չի ներառվում տեխնիկական բնութագրերում: Հաշվի առնելով վերոգրյալը՝ խնդրում ենք թույլատրել մասնակցել մրցույթին այնպիսի թղթով, որի տեխնիկական բնութագրում պայծառությունը նշված չէ, սակայն մյուս բոլոր պարամետրերով այն լիովին համապատասխանում է մրցույթի պահանջներին և անցել է ՀՀ-ում սահմանված փորձաքննություն: Վստահ ենք, որ տվյալ պարամետրի ճշգրտումը հնարավորություն կտա ապահովել արդար մրցակցություն և ձեռք բերել բարձրորակ թուղթ ավելի մատչելի գնով:

Վերոնշյալ պարզաբանման հարցմանն ի պատասխան գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է պարզաբանումը.

**Պարզաբանում**

Հարգելի գործընկեր, պարզաբանում չի տրամադրվում, քանի որ հարցումը վերաբերվում է Մասնակցի կողմից առաջարկվելիք ապրանքի տեխնիկական բնութագրի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագի համարժեքության համապատասխանությանը: Միաժամանակ տեղեկացնում ենք, որ հրավերով սահմանված են տեխնիկական բնութագրի նվազագույն պահանջները:

Նշենք նաև, որ տվյալ պահանջը չի սահմանափակում և չի խոչընդոտում մրցակցությունը, քանի որ տվյալ ապրանքի համար նույն պարամետրերով նախկինում ևս իրականացվել են գնման ընթացակարգեր, և մի շարք ընկերություններ մասնակցության հայտ են ներկայացրել:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումները համակարգող Աստղիկ Գյուրջյանին:

Հեռախոս 093-455493
Էլ. փոստ a.gyurjyan@keystone.am

«ԷԱՃԱՊՁԲ-2026/3-1-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով

Հանձնաժողովի

| | | |
|---|---|---|
| Նախագահ՝ | ____________________ | Անդրանիկ Հարությունյան |
| Անդամներ՝ | ____________________ | Տաթևիկ Սաֆարյան |
| | ____________________ | Նարեկ Սարգսյան |
| Քարտուղար՝ | ____________________ | Աստղիկ Գյուրջյան |

**ОБЪЯВЛЕНИЕ**
**о разъяснении приглашения**

Настоящий текст объявления утвержден решением Оценочной комиссии
№2 от 03 декабря 2025 года и опубликовывается
в соответствии со статьей 29 Закона Республики Армения "О закупках"

Оценочная комиссия закупочной процедуры с кодом «ԷԱՃԱՊՁԲ-2026/3-1-ԵՊԲՀ», организованной для приобретения Канцелярские и офисные товары для нужд «Ереванского государственного медицинского университета имени Мхитара Гераци», ниже представляет вопрос, полученный 01 декабря 2025 года по данному приглашению с тем же кодом, а также разъяснение, предоставленное 03 декабря 2025 года.

**Вопрос**

Уважаемый заказчик,

Просим разъяснить технические требования к бумаге формата А4 в рамках первого этапа конкурса. В частности, в конкурсной документации указано, что яркость бумаги должна быть не менее 109%.

Хотим отметить, что яркость бумаги класса А+ начинается с 100%, и указанная разница визуально практически незаметна, а также не влияет на внешний вид или качество использования продукции. Кроме того, данный показатель рассматривается как вспомогательный параметр, и у ряда производителей он не обязательно указывается в технических характеристиках.

Учитывая вышеизложенное, просим разрешить участие в конкурсе с бумагой, у которой в технических характеристиках не указан показатель яркости, но по всем остальным параметрам она полностью соответствует требованиям конкурса и прошла экспертизу, установленную в Республике Армения.

Уверены, что уточнение данного параметра позволит обеспечить честную конкуренцию и приобрести высококачественную бумагу по более доступной цене.

В ответ на вышеуказанный запрос о разъяснении оценочная комиссия представляет следующее разъяснение.

**Разъяснение**

Уважаемый участник,

Разъяснение не предоставляется, поскольку запрос касается соответствия технических характеристик предлагаемого Участником продукта минимальным требованиям, предусмотренным приглашением.

В то же время информируем, что в приглашении установлены минимальные требования к техническим характеристикам.

Отметим также, что данное требование не ограничивает и не препятствует конкуренции, так как закупки аналогичного продукта с такими же параметрами ранее также проводились, и ряд компаний подавали заявки на участие.

Для получения дополнительной информации в связи с уведомлением вы можете обратиться к координатору закупок Астгик Гюрджян.

Телефон: 093-455493
Эл. почта почта: a.gyurjyan@keystone.am

Оценочная комиссия по котировке цен по процедуре закупа ԷԱՃԱՊՁԲ-2026/3-1-ԵՊԲՀ

Комиссии

| | | |
|---|---|---|
| Председатель комиссии | ____________ (подпись) | Андраник Арутюнян |
| Члены комиссии | ____________ (подпись) | Татевик Сафарян |
| | ____________ (подпись) | Нарек Саркисян |
| Секретарь комиссии | ____________ (подпись) | Астгик Гюрджян |